ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/09-1

ք.Երևան «28» «02» 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Սեգ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Սեփոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Համակարգչային սարքերի և սարքավորումների սպասարկման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է պայմանագրի Հավելված №1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով սահմանված պահանջներին կամ մատուցել է անպատշաճ որակի ծառայություն,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված Ծառայության մատուցումը սկսել Պատվիրատուի բանավոր կամ գրավոր հանձնարարությունը ստանալուց հետո մեկ ժամվա ընթացքում, եթե Կատարողի բանավոր կամ գրավոր առաջարկությամբ և Պատվիրատուի բանավոր կամ գրավոր համաձայնությամբ այլ ժամկետներ չեն սահմանվել:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4. Եթե կատարողը ծառայությունների մատուցելիս խոտանել է իրեն հանձնված գույքը, ապա պարտավոր է իր հաշվին վերականգնել այն: Ընդ որում, խոտանված գույքի վերականգնման համար գործում է սույն պայմանագրի 2.1.2 և 2.4.1 կետերով սահմանված դրույթները:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №2): Ընդ որում Կատարողը հանձնման -ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3. Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **100 000 (մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի Հավելվածներ №№ 1-ը; 2-ը և 2.1-ը հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Սեգ» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան,Սարկավագի 72/2, 12.18
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011018679	ՀՀ 1510037072220100
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 00878823
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Սեգ» ՍՊԸ-ի տնօրեն
Հ.Հովհաննիսյան	**Վ.Սեփոյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«28» «02» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/09-1» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սեգ» ՍՊԸ-ի
տնօրեն
Վ.Սեփոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Ծառայությունների անվանումները		Չափման միավորը	Միավորի գինը
1	Համակարգչի վերանորոգում			
	1.1	Կոմպլեկտավորող մասերի փոխարինում կամ տեղադրում:	հատ	100
	1.2	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	100
	1.3	Համակարգչային պահարանի հովացուցիչի փոխարինում ներառյալ Cooler	հատ	100
	1.4	CPU-ի հովացուցիչի փոխարինում առանց պահեստամասերի	հատ	100
	1.5	CPU-ի հովացուցիչի փոխարինում ներառյալ Պ4 Ինթել ՍՊՈՒ-ի հովացուցիչ օրիգինալ(Cooler for CPU P4 Intel original),կամ համարժեքը	հատ	3500
	1.6	RAM փոխարինում, ներառյալ DDR 3, 2GB-մհց 1200, կամ համարժեքը	հատ	100
	1.7	RAM փոխարինում, ներառյալ DDR 3, 4GB-մհց 1200, կամ համարժեքը	հատ	100
	1.8	USB ցանցային քարտ	հատ	3000
	1.9	MB նորոգում	հատ	9000
	1.10	MB փոխարինում (առանց պահեստամասերի)	հատ	100
	1.11	MB փոխարինում ներառյալ 478 սոկետ ՎԳԱ օն բորդ, (478 socket, VGA on board), կամ համարժեքը	հատ	5000
	1.12	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 945 չիպսեթ,ՊՍԻ չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 945 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.13	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 31 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 31 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.14	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 35 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(MSI Intel 35 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.15	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 43 չիպսեթ,ՊՍԻ(MSI Intel 43 chipset, PCI) կամ համարժեքը	հատ	100
	1.16	MB փոխարինում ներառյալ ՄՍԻ Ինտել 45 չիպսեթ,ՊՍԻ(MSI Intel 45 chipset, PCI) կամ համարժեքը	հատ	100
	1.17	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 945 չիպսեթ, ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 945 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.18	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 31 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 31 chipset,PCI-Exp) կամ համարժեքը	հատ	27000
	1.19	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 35 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 35 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.20	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 43 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 35 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.21	MB փոխարինում ներառյալ Ասուս Ինտել 45 չիպսեթ,ՊՍԻ-Էքսպ(ASUS Intel 38 chipset, PCI-Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.22	CPU փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	100
	1.23	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4/2.4գ 533/800 մհց 478 փին (CPU P4/2,4g 533/800 mhz 478pin),կամ համարժեքը	հատ	100
	1.24	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4/3.0գ 800մհց 478 փին (CPU P4/3.0g 800mhz 478pin), կամ համարժեքը	հատ	100
	1.25	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼՋԱ775 3.0ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.0GHZ 1M 800MHZ),կամ համարժեքը	հատ	100
	1.26	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼՋԱ775 3.2ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.2GHZ 1M 800MHZ),կամ համարժեքը	հատ	100
	1.27	CPU փոխարինում ներառյալ Պենտիում 4 ԼՋԱ775 3.4ԳՀՑ 1Մ 800ՄՀՑ (LGA775 3.4GHZ 1M 800MHZ),կամ համարժեքը	հատ	100
	1.28	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Դ 820 (2,8ԳՀց) ԼՋԱ775, 2x1024, 800ՄՀց (Dual Core D 820 (2,8GHz) LGA775, 2x1024, 800MHz), կամ համարժեքը	հատ	100

	1.29	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2180 (1.8ԳՀց), 1024, 800ՄՀց (Dual Core E2180 (1.8GHz), 1024, 800MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.30	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2210 (2.2ԳՀց), 1024, 800ՄՀց (Dual Core E2210 (2.2GHz), 1024, 800MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.31	CPU փոխարինում ներառյալ Դուալ Քորե Ե2220 (2.4ԳՀց), 1024, 800ՄՀց (Dual Core E2220 (2.4GHz), 1024, 800MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.32	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7300 (2,66ԳՀց) , 3072, 1066ՄՀց (Core 2 Duo E7300 (2,66GHz), 3072, 1066MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.33	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7400 (2,8ԳՀց), 3072, 1066ՄՀց (Core 2 Duo E7400 (2,8GHz), 3072, 1066MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.34	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե7500 (2,93ԳՀց) , 3072, 1066ՄՀց (Core 2 Duo E7500 (2,93GHz), 3072, 1066MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.35	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե8300 (2,8ԳՀց), 6144, 1333ՄՀց (Core 2 Duo E8300 (2,8GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.36	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Դուո Ե8500 (3.16ԳՀց) , 6144, 1333ՄՀց (Core 2 Duo E8500 (3,16GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.37	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Քուադ Ք8200 (2.66ԳՀց) , 4096, 1333ՄՀց (Core 2 Quad Q8200 (2,66GHz), 4096, 1333MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.38	CPU փոխարինում ներառյալ Քորե 2 Քուադ Ք9400 (2.66ԳՀց) , 6144, 1333ՄՀց (Core 2 Quad Q9400 (2,66GHz), 6144, 1333MHz), կամ համարժեքը	հատ	100
	1.39	RAM փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	100
	1.40	RAM փոխարինում ներառյալ ՍԴՌԱՄ 256ՄԲ ՊՍ 133 (SDRAM 256MB PC 133), կամ համարժեքը	հատ	100
	1.41	RAM փոխարինում ներառյալ ՍԴՌԱՄ 256ՄԲ ՊՍ 100 (SDRAM 256MB PC100), կամ համարժեքը	հատ	100
	1.42	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 2ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 2GB), կամ համարժեքը	հատ	8000
	1.43	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ3 4ԳԲ 1333ՄՀՑ (DDR3 4GB), կամ համարժեքը	հատ	16000
	1.44	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 512Մ 533ՄՀՑ ՊՍ4200 (DDR2 512M 533MHZ PC4200), կամ համարժեքը	հատ	100
	1.45	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1ԳԲ 533ՄՀՑ ՊՍ4200 (DDR2 1GB 533MHZ PC4200) կամ համարժեքը	հատ	100
	1.46	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 256Մ 667/800ՄՀՑ (DDR2 256M 667/800MHZ), կամ համարժեքը	հատ	100
	1.47	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 512Մ 667/800ՄՀՑ (DDR2 512M 667/800MHZ), կամ համարժեքը	հատ	100
	1.48	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 1024Մ 667/800ՄՀՑ (DDR2 1024M 667/800MHZ), կամ համարժեքը	հատ	3000
	1.49	RAM փոխարինում ներառյալ ԴԴՌ2 2048Մ 667/800ՄՀՑ (DDR2 2048M 667/800MHZ), կամ համարժեքը	հատ	9000
	1.50	SVGA փոխարինում կամ տեղադրում(առանց պահեստամասերի)	հատ	100
	1.51	SVGA փոխարինում ներառյալ էյՋիՊի 256Մբ(AGP 256Mb) կամ համարժեքը	հատ	100
	1.52	SVGA փոխարինում ներառյալ էյՋիՊի 512Մբ(AGP 512Mb) կամ համարժեքը	հատ	100
	1.53	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 256Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Ati Radeon 256Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.54	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 512Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Ati Radeon 512Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.55	SVGA փոխարինում ներառյալ Ատի Ռադեոն 1Գբ ՊիՍիԱյ-Էքսպ(Ati Radeon 1Gb PCI Exp) կամ համարժեքը	հատ	19000
	1.56	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ 256Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GS 256Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.57	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ 512Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GS 512Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.58	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 256Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GT 256Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.59	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 512Մբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GT 512Mb PCI Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.60	SVGA փոխարինում ներառյալ Նվիդիա ՋիՖ ՋիՏի 1Գբ ՊիՍիԱյ-Էքսպ(Nvidia GF GT 1Gb PCI Exp) կամ համարժեքը	հատ	100
	1.61	HDD փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	100
	1.62	HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 500 ԳԲ 7200ռպմ (HDD 500GB 7200RPM), կամ համարժեքը	հատ	29000
	1.63	HDD փոխարինում ներառյալ ՀԴԴ 1 ՏԲ 7200ռպմ (HDD 1 TB 7200RPM), կամ համարժեքը	հատ	29000
	1.64	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 2 ՏԲ ՍԱՏԱ, 7200ռպմ, 8ՄԲ (HDD 2 Tb SATA , 7200 rpm, 8MB),կամ համարժեքը	հատ	35000
	1.65	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 1 ՏԲ ՍԱՏԱ , 7200ռպմ (HDD 1 Tb SATA , 7200 rpm), կամ համարժեքը	հատ	100
	1.66	HDD փոխարինում ներառյալ ՀԴ 500Գբ ՍԱՏԱ, 7200ռպմ (HDD 500 Gb SATA, 7200	հատ	100

		rpm), կամ համարժեքը		
	1.67	CD-RW, DVD-RW նորոգում	հատ	100
	1.68	CD-RW, DVD-RW փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	100
	1.69	DVD-RW փոխարինում ներառյալ ԴՎԴ-ՌՎ(DVD-RW), կամ համարժեքը	հատ	6000
	1.70	Սնուցման բլոկի նորոգում	հատ	3000
	1.71	Սնուցման բլոկի փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	100
	1.72	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 350Վտ (Power suply unit for P4 Case 350w), կամ համարժեքը	հատ	100
	1.73	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450Վտ (Power suply unit for P4 Case 450w), կամ համարժեքը	հատ	9000
	1.74	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 550վ (Power suply unit for P4 Case 550W), կամ համարժեքը	հատ	6000
	1.75	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 650վ (Power suply unit for P4 Case 650W), կամ համարժեքը	հատ	9000
	1.76	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 850վ (Power suply unit for P4 Case 850W), կամ համարժեքը	հատ	2000
	1.77	Սնուցման բլոկի փոխարինում ներառյալ Սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 1000վ (Power suply unit for P4 Case 1000W), կամ համարժեքը	հատ	2000
	1.78	Ցանցային քարտի տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	100
	1.79	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Օրանժ (Orange NIC 10/100), կամ համարժեքը	հատ	100
	1.80	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100 Դ-լինկ (D-link 10/100), կամ համարժեքը	հատ	2500
	1.81	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000),կամ համարժեքը	հատ	4800
	1.82	Ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ վայրլեսս 11մբ(Wireles NIC 11mb), կամ համարժեքը	հատ	5000
	1.83	Արտաքին ցանցային քարտի տեղադրում ներառյալ Ցանցային քարտ 10/100/1000 Դ-լինկ (D-link 10/100/1000), կամ համարժեքը	հատ	100
	1.84	Մարտկոց համակարգչի	հատ	500
2		**Նոթբուքի վերանորոգում**		
	2.1	CPU, RAM փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	100
	2.2	HDD փոխարինում կամ տեղադրում (առանց պահեստամասերի)	հատ	100
	2.3	HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 80գբ 5400 նոթբուքի համար (TOSHIBA, 80GB, 5400 for notebook), կամ համարժեքը	հատ	100
	2.4	HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 160գբ 5400ռպմ նոթբուքի համար (TOSHIBA 160GB 5400RPM for notebook), կամ համարժեքը	հատ	100
	2.5	HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 250գբ 5400ռպմ նոթբուքի համար (TOSHIBA 250GB 5400RPM for notebook),կամ համարժեքը	հատ	100
	2.6	HDD, փոխարինում ներառյալ ՏՈՇԻԲԱ 320գբ 5400ռպմ նոթբուքի համար (TOSHIBA 320GB 5400RPM for notebook), կամ համարժեքը	հատ	19000
	2.7	RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 512ՄԲ (SODIMM DDR2 512MB) կամ համարժեքը	հատ	100
	2.8	RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 1ԳԲ (SODIMM DDR2 1GB) կամ համարժեքը	հատ	100
	2.9	RAM փոխարինում ներառյալ ՍՈԴԻՄՄ ԴԴՌ2 2ԳԲ (SODIMM DDR2 2GB) կամ համարժեքը	հատ	4000
3		**Մոնիտորի վերանորոգում**		
	3.1	TDKC փոխարինում առանց TDKC	հատ	100
	3.2	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 15"	հատ	100
	3.3	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 17"	հատ	100
	3.4	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 19"	հատ	100
	3.5	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 20"	հատ	100
	3.6	ԼՍԴ-ի լամպի փոխարինում ներառյալ լամպը 22"	հատ	100
	3.7	ԼՍԴ-ի մատրիցայի փոխարինում	հատ	9000
	3.8	Վերանորոգում (ֆոկուսի կարգավորում, գունահամատեղող մեխանիզմի կարգաբերում)	հատ	100
	3.9	Վերանորոգում (վնասված մասերի փոխարինում)	հատ	9000
Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)			**50311120**	
Ծառայության մատուցման ժամկետները			Պայմանագրի 2.4.1 կետով սահմանված ժամկետներում:	
Ընդհանուր ծառայության մատուցման ավարտը՝			**15.12.2018թ.**	

- Փոխարինվող մասերի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է:
- Տպիչների քարթրիջները լիցքավորումից հետո տպագրվող էջերի քանակը պետք է համապատասխանի գործարանային լիցքավորմանը, թույլատրելի շեղումը ոչ ավելի 5 տոկոս:

Հավելված №2
«28» «02» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/09-1» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Սեգ» ՍՊԸ-ի
տնօրեն
Վ.Սեփոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(հազար դրամ)

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50311120	Համակարգչի վերանորոգում	-	4.0	8.0	12.0	16.0	20.0	24.0	28.0	32.0	36.0	40.0	40.0	**40.0**
2		Նոթբուքի վերանորոգում	-	3.0	6.0	9.0	12.0	15.0	18.0	21.0	24.0	27.0	30.0	30.0	**30.0**
3		Մոնիտորի վերանորոգում	-	3.0	6.0	9.0	12.0	15.0	18.0	21.0	24.0	27.0	30.0	30.0	**30.0**
Ընդամենը			**-**	**10.0**	**20.0**	**30.0**	**40.0**	**50.0**	**60.0**	**70.0**	**80.0**	**90.0**	**100.0**	**100.0**	**100.0**

Հավելված №3
«28» «02» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/09-1» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011018679
ՀՎՀՀ 02507198

ԿԱՏԱՐՈՂ
«Սեգ» ՍՊԸ
ք.Երևան,Սարկավագի 72/2, 12.18
«Արարատբանկ» ԲԲԸ
ՀՀ 1510037072220100
ՀՎՀՀ 00878823

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_____» 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ծառայության մատուցման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «28» «02» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/09-1
Պատվիրատուն և Կատարողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2018թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

№	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք են հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №3.1
«28» «02» 2018թ. կնքված
«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/09-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սեգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև «28» «02» 2018 թվականին կնքված № ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԾՁԲ-18/09-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____» 2018 թվականին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	**Ընդունեց** հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն